## Ֆինանսական օժանդակության քաղաքականություն (Charity Care/Kid Care/Medicaid)՝ հասանելի լեզվով ամփոփ նկարագրություն

HMH Hospitals Corporation-ի (այսուհետ՝ «Hospitals») ֆինանսական օժանդակության քաղաքականությունը և Charity Care/Kid Care/Medicaid Ֆինանսական օժանդակության քաղաքականությունը (այսուհետ համատեղ՝ «FAP») իրավասու պացիենտներին տրամադրում են մասնակի կամ լրիվ զեղչված շտապ օգնություն կամ այլ անհրաժեշտ բուժօգնություն, որոնք տրամադրվում են HMH Hospitals Corporation-ի կողմից: Ֆինանսական օժանդակությունից օգտվել ցանկացող պացիենտները պետք է դիմեն ծրագրին, որը համառոտ ներկայացված է ստորև:

**Իրավասու ծառայություններ**. շտապ օգնություն կամ անհրաժեշտ այլ բուժօգնություն, որը տրամադրվում է Hospitals-ի կողմից և որի համար Hospitals-ը վճարվում է: FAP-ը կիրառելի է միայն այն ծառայությունների դեպքում, որոնց համար Hospitals-ը վճարվում է: Այլ ծառայությունները, որոնց համար առանձին վճարվում են այլ մատակարարներ, օրինակ՝ բժիշկներ կամ լաբորատորիաներ, չեն համարվում իրավասու ծառայություններ FAP-ի համաձայն:

**Իրավասու պացիենտներ**. իրավասու ծառայություններ ստացող պացիենտներ, որոնք ներկայացրել են ֆինանսական օժանդակության ամբողջական դիմում (այդ թվում՝ փաստաթղթեր/տեղեկություններ) և որոնք իրավասու են համարվել ֆինանսական օժանդակության համար Hospitals-ի կողմից:

**Ինչպես դիմել.** FAP և համապատասխան դիմումի ձևերը հնարավոր է ձեռք բերել/լրացնել/ներկայացնել հետևյալ կերպ՝

Տե՛ս և տպի՛ր տեղեկություններ Hospitals-ի կայքէջում

**Կայքէջ.** Կարելի է գտնել ֆինանսական օժանդակության մասին տեղեկություններ առցանց՝ հետևյալ կայքէջից՝ https://www.hackensackmeridianhealth.org/

**Դիմում.** Կարելի է դիմել ֆինանսական օժանդակություն ստանալու համար՝ լրացնելով դիմումի թղթային օրինակը: Թղթային օրինակով դիմումը հասանելի է անվճար հետևյալ եղանակներով.

ա) **փոստով.** Կարող եք գրել հետևյալ հասցեին և խնդրել ֆինանսական օժանդակության դիմումի թղթային օրինակը.

- HUMC patients 100 First Street - Suite 300 Hackensack, NJ 07601,
- Palisades Medical Center, 7600 River Road, North Bergen, NJ, 07047,
- Jersey Shore University Medical Center, Ocean Medical Center, Riverview Medical Center, Southern Ocean Medical Center, Bayshore Medical Center, and Raritan Bay Medical Center - 1945 Route 33, Neptune NJ, 07753

բ) **անձամբ.** Կարող եք այցելել Ֆինանսական օժանդակության վարչություն անձամբ (երկուշաբթիից՝ ուրբաթ, առավոտյան 8:00-ից մինչև կեսօրվա 4:00-ը): Վարչությունը գտնվում է հետևյալ հասցեում.

- HUMC,100 First Street - Suite 300 Hackensack, NJ 07601
- Palisades Medical Center, 7600 River Road, North Bergen, NJ, 07047
- Jersey Shore University Medical Center, 1945 Route 33, Neptune, NJ, 07753

**Ֆինանսական օժանդակության քաղաքականություն (Charity Care/Kid Care/Medicaid)՝ հասանելի լեզվով ամփոփ նկարագրություն**

- Ocean Medical Center, 425 Jack Martin Boulevard, Brick, NJ 08724
- Riverview Medical Center, 1 Riverview Plaza, Red Bank, NJ 07701
- Southern Ocean Medical Center, 1140 Route 72 W, Manahawkin, NJ 08050
- Bayshore Medical Center, 727 N Beers St, Holmdel, NJ 07733,
- Meridian Family Health Center, 1828 W Lake Ave # 202, Neptune, NJ, 07753
- Jane H Booker Family Health Center, Neptune, NJ, 07753
- Booker Behavioral Health Center, Shrewsbury, NJ, Parkway 100 Behavioral Health Center, Neptune, NJ, 07753
- Raritan Bay Medical Center, 530 New Brunswick Ave, Perth Amboy, NJ

գ) **հեռախոսով.** Կարող եք զանգահարել Ֆինանսական օժանդակության վարչություն՝ (551) 996-4343 HUMC, (201) 854-5092 PMC կամ (732) 902-7080՝ այլ վայրեր

Դիմումի գործընթացի ամփոփ նկարագրություն

- Պացիենտը լրացնում է գրավոր դիմում՝ տնային տնտեսության եկամտի, ֆինանսական միջոցների և ընտանիքի մեծության մասին տեղեկություններով
- Պահանջվում է բնակության մասին ապացույց՝ Նյու Ջերսիի վարորդական իրավունքի, կոմունալ ծախսերի վճարների կամ այլ օժանդակ նամակի ձևով:
- Ստուգվում է դիմումի ամբողջականությունը և ճշգրտությունը:
- Թերի տեղեկությունների դեպքում պացիենտին հարցում է կատարվում:
- Ուղարկվում է դիմումի հաստատում կամ մերժում:

**Հասանելի լեզուներ.** Ֆինանսական օժանդակության քաղաքականության դիմումը և հասանելի լեզվով ամփոփ նկարագրությունը մատչելի են ցանկացած սոցիալական խմբի հիմնական լեզվով, որը անգլերենի սահմանափակ իմացություն («LEP») ունի: Սոցիալական այդ խումբը կազմում է Hospitals-ի առաջնային ծառայության տարածքում բնակվող մարդկանց հինգ (5%) տոկոսից պակաս կամ 1000 մարդ:

Լրացված դիմումները կարող են ուղարկվել Ֆինանսական օժանդակության վարչություն՝ վերոնշյալ հասցեներով:

Ֆինանսական օժանդակության իրավասության որոշում. սովորաբար իրավասու անձինք իրավունք ունեն ստանալ ֆինանսական օժանդակություն նվազող սանդղակով, եթե ընտանեկան եկամուտը Դաշնային կառավարության դաշնային աղքատության ուղեցույցերի (FPG) 500%-ն է կամ ավելի ցածր:

Եթե անձը իրավասու է ստանալ ֆինանսական օժանդակություն, ապա դա նշանակում է, որ նրա բուժօգնության համար կկատարվի մասնակի կամ ամբողջական օժանդակություն, և նրանից չի գանձվի ապահովագրված անձանցից «Սովորաբար գանձվող գումարներից» (AGB) ավելի վճար

**Ֆինանսական օժանդակության քաղաքականություն (Charity Care/Kid Care/Medicaid)՝ հասանելի լեզվով ամփոփ նկարագրություն**

(AGB, ինչպես սահմանված է IRC-ի 501(r) բաժնում Ներքին եկամուտների ծառայության կողմից): Ֆինանսական օժանդակության մակարդակները, որոնք հիմնվում են բացառապես Ընտանեկան եկամտի և FPG-ի վրա, սահմանվում են, եթե եկամուտը FPG-ի մինչև 500%-ն է:

Ծանուցում. FPG-ից բացի հաշվի են առնվում այլ չափանիշներ (օրինակ՝ կանխիկ գումարի կամ այլ ակտիվների առկայություն, որոնք հնարավոր է փոխարինել կանխիկով և ամսական զուտ եկամտի ավելցուկ՝ ամսական ծախսերի համեմատությամբ): Նման դեպքերը վերոնշյալի համար բացառություն են կազմում: Եթե Ընտանեկան եկամտի մասին հաշվետվություն ներկայացված չէ, ապա տեղեկություն կպահանջվի այն մասին, թե տվյալ անձը ինչպես է հոգում ամենօրյա կարիքները: Hospitals-ի ֆինանսական օժանդակության վարչությունը քննում է ներկայացված դիմումները՝ ամբողջականության առումով, և որոշում է կայացնում Ֆինանսական օժանդակության իրավասության մասին՝ Hospitals-ի ֆինանսական օժանդակության քաղաքականության համաձայն: Ոչ լրիվ դիմումները չեն քննվում, բայց դիմումատուներին տեղեկացվում է, և վերջիններս հնարավորություն են ստանում լրացնել բացակայող փաստաթղթերը/տեղեկությունները:

Օգնության, օժանդակության կամ հարցերի համար կարող եք անձամբ այցելել Ֆինանսական օժանդակության վարչություն (երկուշաբթիից՝ ուրբաթ, առավոտյան 8:00-ից մինչև կեսօրվա 4:00-ը): Վարչությունը տեղակայված է հետևյալ հասցեում.

- HUMC,100 First Street - Suite 300 Hackensack, NJ 07601
- Palisades Medical Center, 7600 River Road, North Bergen, NJ, 07047
- Jersey Shore University Medical Center, 1945 Route 33, Neptune, NJ, 07753
- Ocean Medical Center, 425 Jack Martin Boulevard, Brick, NJ 08724
- Riverview Medical Center, 1 Riverview Plaza, Red Bank, NJ 07701
- Southern Ocean Medical Center, 1140 Route 72 W, Manahawkin, NJ 08050
- Bayshore Medical Center, 727 N Beers St, Holmdel, NJ 07733,
- Meridian Family Health Center, 1828 W Lake Ave # 202, Neptune, NJ, 07753
- Jane H Booker Family Health Center, Neptune, NJ, 07753
- Booker Behavioral Health Center, Shrewsbury, NJ, Parkway 100 Behavioral Health Center, Neptune, NJ, 07753
- Raritan Bay Medical Center, 530 New Brunswick Ave, Perth Amboy, NJ

Հեռախոսով. Ֆինանսական օժանդակության վարչություն կարելի է զանգել՝ (551) 996-4343 HUMC, (201) 854-5092 PMC կամ (732) 902-7080՝ այլ վայրեր: